

տակ, յօգուտ վարժարանական պատմութեան և բանասէր ազգայիններու: Իսկ մերձաւոր տարիներու և արդի ժամանակներու մասին բաւ համարեցանք լոկ կարելորով գոհանալ:

գ. Պաշտօններու Սկզբնաւորութեան և Աւարտման պաշտօնական թուականները ստուգելու համար մեր նախընտրած աղբիւրներն եղան աստիճանական կարգաւ. 1. Ժող. Արձանագրութիւնք. — 2. Պաշտօնազիրք. — 3. Օրագրութիւնք. — 4. Առանձնական թղթակցութիւնք. — 5. Հաւասար տեղեկութիւնք՝ գործող անձերէ (նորագոյն ժամանակներուն համար):

դ. Աւարտման թուականի բացակայութեան պարագային՝ նշանակած ենք մի միայն Սկզբնաւորութեան թուականը որ ունինք. իսկ չակերտեալ թուականը կը նշանակէ՝ որ դեռ Աւարտը չէ եկած: Ի հարկին՝ անգրագարձած ենք նաեւ ԿԱՐԵՒՈՐ ԵՄԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ մէջ:

և. Ներկայ աշխատութեանս իբր աղբիւր ծառայեցին

Զեազիրներ

1. Պաշտօնական Արձանագրութիւնք՝ Ուխտի Ընդհանուր, Վարչական, Խնամակալաց և Ուսումնական Ժողովոց, 1832-1936:

2. Թղթակցութիւնք զանազանք. (բազմաթիւ Պաշտօնագրեր, հարիւրաւոր նամակներ, ուսումնական տեղեկութիւնք, ծրագիրք, տոմարք և այլ կարելոր թղթեան):

3. Օրագրութիւնք Սոմալեան Աբբահօր, (զանազան տարիներ)

4. Օրագրութիւնք զանազան միաբանից

5. Զրոյցք օրականք, (զանազան տարիներ)

6. Դեպք օրականք » »

7. Անցք օրականք » »

8. Յիշատակարան Մ. Ռ. վարժարանի. (մեծաղիւր եռիջեան օրագրութիւն մը միայն՝ 1834-1837 շրջանի):

9. Մտտեան պաշտօնէից Ռափայէլեան վարժարանի. (չորս թուղթ է միայն և կ'ընդհատի 1875 թուականին):

10. Կենցաղ Հ. Յարութիւն վ. յ. Սեդեքեան, այն է Ինքնապատու՛ Օրագրութիւն կենաց ճորա. գր. 1847 ամին. (ետեւը՝ Յաւելուածին մէջ կը գրէ իր նկատմամբ. « ի 30 Ապր. [1847]. Աւարտեաց և եզ ի կարգի զՕրագրութիւնն եւթանասուն և երկամեայ կենաց իւրոց »):

11. Ազգաբանութիւն Ռափայէլեան և Մոշարտեան Տանց ըստ պատմելոյ Պարոն Արքանաւուր Արանութեան յամին 1851:

Տպագիրներ

12. Թէոդորեանի « Պոմ. Մոշր. վ. յ. ժ. ի » քառահատոր. տպ. 1866:

13. « Բազմալեպ » ի զանազան տարիներ:

*
**

Տեսչական կազմի ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐը ներկայացնելէ առաջ հարկ կը համարինք տալ քանի մը կարելոր ծանօթութիւններ Պաշտօնեաներու անուան սահմանին և անոր յարակից պարագաներուն մասին:

ՏԵՍՈՒՉ

Ըստ Ս. Ղազարու դիւանական թուղթերու՝

1^o. Հոմանիշներ են հնութեան կարգաւ՝ Ուղղիչ, Առաջնորդ, Կառավար, Վերակացու, Տեսուչ և Վերատեսուչ: